


Հիբրիդային պատերազմ.

տեսական մոտեցումների համեմատական վերլուծություն

Հովհաննիսյան Հայկ Հ.

*Ռազմական գիտությունների թեկնածու, դոցենտ, պահեստագործի գնդապետ:
ՀՀ Պաշտպանության նախարարության ռազմագիտակրթական քաղաքականության
փարչության ռազմական գիտության բաժնի գլխավոր մասնագետ (Երևան ՀՀ)*

 <https://orcid.org/0000-0002-1520-9224>
hayk.hovhannisyan79@gmail.com

ՀՏԳ՝ 355; EDN: UCJLOR

DOI: 10.58587/18292437-2025.4-20

Հանգուցաբառեր և բառակապակցություններ` Հիբրիդային պատերազմ, պատերազմի տեսություն, անհամաչափ հակամարտություն, ռազմական դոկտրին, Կլաուզեվից, Հոֆման, Գերասիմով

Гибридная война:

сравнительный анализ теоретических подходов

Оганесян Гайк О.

Кандидат военных наук, доцент, полковник резерва.

Главный специалист отдела военной науки, управления политики военной науки и образования министерства обороны Республики Армения (Ереван, РА)

Аннотация. В статье рассматривается правомерность использования термина «гибридная война» с точки зрения характеристики современных конфликтов. На основе взглядов военных теоретиков (К. Клаузевица, Ф. Хоффмана, М. ван Кревельда и др.) представлен сравнительный анализ теоретических подходов к концепции гибридной войны. Выявляются различия в подходах современных научных школ, а также ставится вопрос о правовой легитимности таких войн.

Ключевые слова и словосочетания: Гибридная война, теория войны, асимметричный конфликт, военная доктрина, Клаузевиц, Гофман, Герасимов

Hybrid Warfare:

Comparative Analysis of Theoretical Approaches

Hovhannisyan Hayk H.

PhD of military sciences, associate professor, colonel of the reserve army.

Chief Specialist of the Military Science Department of the Ministry of Defence of the RA (Yerevan, RA)

Abstract. Hybrid Warfare: Is it War? Comporative Analysis of Theoretical Approaches This article examines the legitimacy of the term «hybrid warfare» to describe contemporary conflicts. Based on the analysis of classic and modern military theorists (Carl von Clausewitz, Frank Hoffman, Martin van Creveld, and others), a comparative review of theoretical approaches to hybrid war is provided. The article explores differences in interpretation between traditional and contemporary schools and gighlights the legal ambiguity surrounding hybrid conflict. It concludes that hybrid warfare represments a transformation of the nature of war in the 21st century.

Keywords & phrases: Hybrid war, theory of war, asymmetric conflict, military doctrine, Clausewitz, Hoffman, Gerasimov

Նախարան

Տեխնոլոգիաների, մեդիա միջավայրի և կիրառական գիտությունների արմատապես փոխել են ժամանակակից հակամարտությունների բնույթն ու վարման եղանակները: Այս համատեքստում, վերջին տասնամյակներում առավել լայն տարածում է ստացել «հիբրիդային պատերազմ» եզրույթը: Ռազմական գործողությունների դասական համարվող եղանակների հետ զուգահեռ զարգացում են ապրում ազդեցու-

թյան նոր ձևերի, ուժերի և միջոցների կիրառման նոր եղանակների, ինչպիսիք են ահաբեկչության, կիրառական գիտությունների, տեղեկատվական գործողությունների, ինչպես նաև հանցավոր տարրերի լայն կիրառումը թե պետական և թե ոչ պետական ռազմական կառույցների կողմից:

Գիտական հանրության մեջ տեսակետները միանշանակ չեն և բաց է մնում այն հարցի հստակեցումը, թե կարելի է արդյոք «հիբրիդային պատերազմ» եզրույթով բնորոշվող երևույթը

դիտարկել որպես պատերազմ, թե՛ այն պարզապես քաղաքական-տեղեկատվական պայքարի տեսակ է, որը փոխարինում կամ փոխարացնում է զինված հակամարտությանը:

Պատերազմն իր դասական ընկալումով, բնութագրվում է որպես քաղաքականության շարունակություն այլ եղանակներով [1, էջ 150]: Կլաուզևիցի պատերազմի վերաբերյալ այս բնութագրումը չի սահմանափակում պատերազմավարման եղանակների բազմազանությունը, ինչը չի կարելի ասել ռազմական հանրագիտարանային բառարանում բերված սահմանման մասին, որում նշվում է, որ պատերազմը սոցիալ-քաղաքական երևույթ է, որն իրենից ներկայացնում է պետությունների, ազգերի, ժողովուրդների, դասերի և սոցիալական խմբերի միջև սոցիալ-քաղաքական, տնտեսական, գաղափարական, ինչպես նաև ազգային, կրոնական, տարածքային և այլ հակասությունների կարգավորման ծայրահեղ ձև՝ ռազմական բռնության միջոցով [2, էջ 289]:

Հոդվածի նպատակն է տարբեր դիտանկյուններից ուսումնասիրել «հիբրիդային պատերազմ» եզրույթն ու պարզել դրա էությունն ու առանձնահատկությունները, իրականացնել համեմատական վերլուծություն դասական համարվող և հիբրիդային տարբեր պարունակող գործողությունների միջև:

Պատերազմի դասական ընկալումը. Կարլ ֆոն Կլաուզևից

Կարլ ֆոն Կլաուզևիցը, պատերազմի դասական տեսության հեղինակներից մեկը, պատերազմը բնութագրում էր որպես «քաղաքականության շարունակություն՝ այլ միջոցներով», ըստ նրա «պատերազմը սահմանագծին հասցված բռնության գործողություն է, որի նպատակն է ստիպել հակառակորդին կատարելու մեր կամքը»: Նա պատերազմը դիտարկում էր որպես կազմակերպված զինված ուժերի բախում, որոնց առջև դրված են հստակ նպատակներ [1]: Կլաուզևիցի հայացքներով, պատերազմը քաղաքականության գործիք է և պարտադիր պետք է կրի նրա բնույթն ու չափվի նրա մասշտաբներով: Այդ իսկ պատճառով ստեղծելով քաղաքականության և պատերազմի միջև փոխադարձ կապերի սեփական ուրվագիծը, նա պնդում է, որ պատարազմի վարումը, ընդհանուր առմամբ, հենց քաղաքականությունն է, որ գրիչը փոխարինել է սրով: Այստեղ հատկանշական է, որ ենթակա լինելով քաղաքականությանը և լինելով քաղաքականության շարունակությունը այլ միջոցներով, պատերազմն ունի սեփական օրենքներն ու օրինաչափությունները:

Պատերազմի նպատակներին հասնելու համար գոյություն ունեն բազմաթիվ, անհամար ուղիներ և դրանք թվարկելի չեն ամբողջությամբ, ինչպես և քաղաքականության նպատակներին

հասնելու ուղիները: Սակայն, ըստ Կլաուզևիցի, պատերազմի նպատակին հասնելու համար առկա է միայն մեկ միջոց և այդ միջոցը մարտն է: Պատերազմում տեղի ունեցող ամեն բան զինված ուժերի գործողություններն ապահովելու նպատակ է հետապնդում, իսկ որտեղ կիրառվում են զինված ուժերը, հիմքում պետք է դրված լինի մարտի գաղափարը:

Ժամանակակից մոտեցում՝ Ֆրենկ Հոֆֆման և հիբրիդային սպառնալիքի հայեցակարգը

«Հիբրիդային պատերազմ» ձևակերպումն առաջին անգամ կիրառվել է ամերիկյան ռազմական տեսաբաններ Ջեյմս Մեթիսի և Ֆրենկ Հոֆֆմանի կողմից «Future Warfare: The Rise of Hybrid Wars» հոդվածում [5], որը տպագրվել է 2005 թ-ին:

Ծարունակելով իր հետազոտությունները հիբրիդային գործողությունների ոլորտում, Ֆ. Հոֆֆմանը, ուսումնասիրելով 2006 թվականի Իսրայել – Հեզբոլլա հակամարտությունը, առաջարկեց հարբիդային պատերազմ եզրույթը՝ նկարագրելու այն հակամարտությունները, որտեղ համակցված են ինչպես դասական ռազմական մեթոդները, այնպես էլ նոր ազդեցության միջոցները՝ ահաբեկչություն, կիբեռհարձակումներ, տեղեկատվական գործողություններ և հանցավոր տարրեր:

Հոֆֆմանի համոզմամբ՝ հիբրիդային պատերազմը նոր ձևի պատերազմ է, որտեղ միաժամանակյա կիրառվում են ռազմական գործողությունների մի քանի տեսակ այնպիսի հակառակորդների կողմից, որոնք հասկանում են, որ հակամարտության հաջող ավարտի համար պահանջվում են ժամանակի կոնկրետ պահին դրված նպատակների հաշվառմամբ գործողությունների տարատեսակ ձևեր [4]:

Էվոլյուցիոն հայացք՝ Մարտին վան Կրենդդ

Մարտին վան Կրենդդը 20-րդ դարի առավել հայտնի ռազմական տեսաբաններից է, ով զգալի ներդրում ունի անհամաչափ և հիբրիդային պատերազմների հայեցակարգերի զարգացման գործում: Սակայն «հիբրիդային պատերազմ» եզրույթը նա օգտագործում է ավելի քիչ, քան «ցածր ինտենսիվության հակամարտություններ», «չորրորդ սերնդի պատերազմներ» և «պատերազմներ պետությունից դուրս» ձևակերպումները: Իր «Պատերազմի փոխակերպումը» (The Transformation of War, 1991) գրքում նա պնդում է, որ ավանդական պետական բանակները կորցնում են բռնություն գործադրելու իրենց մենաշնորհը: Այս պարագայում առավել հաճախ հակամարտության մեջ են մտնում ոչ պետական դերակատարները՝ ապստամբներ, ահաբեկչական և այլ քրեածին խմբավորումներ, աշխարհագորային կազմավորումներ և այլք:

Մրանք հիբրիդային պատերազմների առանցքային տարրեր են, որոնցում համադրվում են ավանդական և ոչ ավանդական ուժերի կիրառումը: Նա նշում է, որ ուժեղ և թույլ, բայց հարմարվող հակառակորդների միջև հակամարտությունները դառնում են սովորական: Այսպիսի հակամարտություններում հաղթանակը մեծապես կախված է ոչ թե ռազմական հզորությունից, այլ քաղաքական կամքից, լեգիտիմությունից և նարատիվները վերահսկելու կարողությունից [6]: Վան Կրևելդը ուշադրություն է դարձնում ժամանակակից պատերազմներում բարոյական, գաղափարական և հասարակության ընկալման կարևորության վրա: Թվարկվածները համադրվում են հիբրիդային պատերազմի հետ, որտեղ տեղեկատվական գործողությունները, կիրեռահարձակումները և հոգեբանական ճնշումները առանցքային դեր են խաղում:

Ապագայի պատերազմները վան Կրևելդը նկարագրում է որպես ռազմաճակատի բնագծերից զրկված, դրանք տեղի կունենան ամենուրեք և ոչ մի տեղ կունկրեստ՝ քաղաքներում, մեդիա և կիրեռատիրությունում: Այս բնութագրումը արդեն իսկ կարելի է լիարժեք կերպով կիրառել Ղարաբաղի, Ուկրաինայի և Միդիայի տարածքներում առկա հակամարտությունները բնութագրելու համար:

Ըստ վան Կրևելդի, կանոնավոր բանակը ապագայի պատերազմների խնդիրները լուծելու հարցում դառնում է նվազ պիտանի, ինչը կրերի շարժունության և շարժառիթավորման բարձր մակարդակ ունեցող ոչ կանոնավոր կազմավորումների դերը:

Այսպիսով, վան Կրևելդը ոչ միայն կանխատեսել է հիբրիդային պատերազմի հայեցակարգի առաջացումը, այլև մատուցել է դրա գիտակցման համար տեսական բազան: Նրա գաղափարները արդիական են մասնավորապես փոքր պետությունների համար, որոնք հանդիպում են առավել ուժեղ և ոչ ավանդական եղանակներով գործող հակառակորդի կողմից սպառնալիքների: Վան Կրևելդի տեսակետը կիսելով, կարող ենք փաստել, որ ժամանակակից և ապագային միտված զինված ուժերի կառուցման գործընթացն իր առանցքային ուղղություններից է համարում թե՛ զինձառայողների և թե՛ պետության բնակչության բարոյականային բարձր արժեքները, մարտական ստորաբաժանումների ինքնաբավությունը, շարժունությունը և կառավարման նոր մոտեցումների գերակայությունը, մեխանեստրսների և կիրեռատիրոջի զարգացումն ու գործունեությունը ի շահ պետության ռազմական անվտանգության և պաշտպանության, ինչպես նաև՝ արհեստական բանակային տարրեր պարունակող զինատեսակների ու ծրագրային ապահովման կիրառումը:

Գերմանական դպրոցի ավանդապաշտական մոտեցումը

Դասական գերմանական ռազմական տեսության ներկայացուցիչները (Շարնհորսթ, Մոլտկե) պատերազմը դիտարկել են որպես հստակ կառուցվածքով իրադարձություն, որում ռազմական գործողությունները կազմակերպվում և վերահսկվում են պետության կողմից: Այս դպրոցի մոտեցմամբ հիբրիդային պատերազմը խախտում է պատերազմի դասական կանոնները, քանի որ ահաբեկչական հարձակումների, ոչ ռազմական միջոցների և անհամաչափ պայքարի կիրառումը չեն համապատասխանում պատերազմավարման դասական ըմբռնմանը: Գերմանական դպրոցը պատերազմը դիտարկում է որպես բացառապես պետության մենաշնորհ, միայն պետությունը կարող է պատերազմ հայտարարել, իրականացնել գորահավաք և ղեկավարել զինված ուժերը իրավական նորմերին համապատասխան: Շարնհորսթը բարեփոխումներ իրականացրեց պրուսական բանակում, պնդում էր կարգապահության բարձր մակարդակի և կենտրոնացված կառավարման անհրաժեշտությունը: Հելմուտ ֆոն Մոլտկեն (ավագը) զարգացնում էր պատերազմի գաղափարը որպես ճշգրիտ գիտություն, ուր պլանավորումը, գորահավաքը և հրամանատարությունը պետք է ենթարկվեն խիստ կանոնների: Մոլտկեն իր աշխատություններում փորձ արեց տեսականորեն գիտակցել զանգվածային բանակների կիրառման ոլորտում նոր երևույթները: Նա չէր բացառում պատերազմի կապը քաղաքականության հետ, սակայն պնդում էր, որ քաղաքականությունը վճռորոշ դեր ունի միայն պատերազմի սկզբի և ավարտի վրա: Մոլտկե ավագը արագընթաց, տոտալ պատերազմի տեսության հիմնադիրներից մեկն է [7]:

Ըստ գերմանական դպրոցի, պատերազմը պաշտոնապես հայտարարված վիճակ է, հստակ որոշված թշնամիով, ռազմաճակատով և քաղաքական նպատակներով: Այս առումով, ոչ կանոնավոր զինված խմբերի կամ պրոքսի ուժերի մասնակցությամբ հակամարտությունները դիտարկվում են որպես ռազմական կարգի խախտումներ, իսկ ահաբեկչության, ապատեղեկատվության, հիբրիդային եղանակների կիրառումը՝ լեգիտիմ ռազմական գործողությունների շրջանակներից դուրս: Պատերազմի դասական տեսությունը հստակ տարբերակում է մտցնում պատերազմի և խաղաղության միջև, մեկից մյուսին անցնելը պահանջում է քաղաքական ակտ (պատերազմի կամ խաղաղության հայտարարում), մինչդեռ հիբրիդային պատերազմի տեսության պարագայում դա բացակայում է:

Գերմանական ավանդապաշտության տեսանկյունից, հիբրիդային պատերազմները խախտում են նպատակների և միջոցների պարզու-

թյունը, ջնջում են բանակի և քաղաքացիական բնակչության միջև սահմանագծերը, ստեղծում են իրավականորեն ոչ միանշանակ իրավիճակներ, օրինակ՝ մասնավոր ռազմական կազմակերպությունների կիրառումը, խայթարում են ուժի կիրառման պետության մենաշնորհը:

Ռուսական մոտեցում՝ Գերասիմովի բաձնը և դոկտրինը

Պատերազմի վերաբերյալ ռուսական մոտեցումը վերջին տասնամյակում կազմում է դասական տեսությունների և ժամանակակից հիբրիդային գործողությունների սինթեզ և հենվում է հարուստ պատմական փորձի, խորհրդային ժառանգության և նորագույն հայեցակարգերի վրա: 2013 թ-ին ՌԴ ՉՌԲ Գլխավոր շտաբի պետ Վալերի Գերասիմովը գեկոյց ներկայացրեց, որում փաստացի ձևակերպեց ռուսական մոտեցումները ժամանակակից պատերազմի վերաբերյալ: Նրա առանցքային դիրքորոշումն էր, որ քաղաքական և ռազմավարական նպատակներին հասնելու գործում ոչ ուժային եղանակների դերը աճել է և շատ դեպքերում իրենց արդյունավետությամբ գերազանցել գեների հզորությանը [7]: Ըստ Գերասիմովի հիբրիդային պատերազմներում ներազդման ռազմական և ոչ ռազմական եղանակների հարաբերակցությունը կարող է կազմել 1:4: Ռուսական դոկտրինն ընդգծում է, որ հիբրիդային պատերազմը ոչ միայն ռազմական գործողություններ են, այլև ներազդման ոչ ավանդական եղանակների մի ամբողջ համալիր, որոնք կիրառվում են ռազմական գործողությունների հետ միաժամանակ և միտված են քաղաքական ու ռազմավարական նպատակներին հասնելուն:

Հիբրիդային պատերազմի իրավական կարգավիճակը

Հիբրիդային պատերազմները մարտահրավերներ են միջազգային իրավունքին: Հաճախ բացակայում է պաշտոնական պատերազմ հայտարարելը, ջնջվում են խաղաղության և պատերազմի, ռազմական և քաղաքացիական մասնակցության սահմանները: Պետությունների կողմից ոչ պետական դերակատարների կիրառումը բարդացնում է միջազգային իրավունքի նորմերի՝ մասնավորապես Ժնևյան կոնվենցիաների և ՄԱԿ կանոնադրության կիրարկումը:

Հիբրիդային պատերազմը 21-րդ դարի միջազգային կայունության առավել սուր սպառնալիքներից է, որի առանցքային առանձնահատկությունն է իրավական անորոշության նպատակային չարաշահումը: Միջազգային իրավունքի ժամանակակից համակարգը կարիք ունի հարմարեցման, հակառակ դեպքում այն չի կարող մնալ խաղաղության, անվտանգության և արդարության պաշտպանության գործուն գործուք:

Հայաստանը, որպես պետություն, որ հաճախ է բախվել ագրեսիայի հիբրիդային տարրերի, կարող է և պետք է ակտիվ դերակատարում ունենալ այդ երևույթի իրավական ընկալման և կարգավորման նոր մոտեցումների ձևավորման գործում: Հիբրիդային սպառնալիքներին արդյունավետ հակազդման համար միջազգային իրավունքը կարիք ունի զարգանալու՝ ադապտացվելով հակամարտությունների նոր ձևերին: Անհրաժեշտ ենք համարում մշակել.

– հիբրիդային պատերազմը բնորոշող ունիվերսալ սահմանում,

– կիբեռ և տեղեկատվական գործողությունների իրավական դասակարգման չափորոշիչներ,

– պետությունների պատասխանատվության և կոլեկտիվ արձագանքման մեխանիզմներ,

– միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի հարմարեցում ժամանակակից հակամարտությունների իրողություններին:

Միաժամանակ անհրաժեշտ է ուժեղացնել միջազգային ինստիտուտների դերը (օրինակ, ՄԱԿ ԱԽ, ՄԻԵԴ և այլ) նորմերի մեկնաբանման նախադեպային պրակտիկայի ձևավորման հարցում:

Այս առումով ռազմական մտքի առաջատար՝ աշխարհի մի շարք պետություններում արդեն իսկ իրականացվել են փոփոխություններ իրենց ռազմական դոկտրիններում: Այսպես՝ ԱՄՆ-ում մշակվել է Multi-Domain Operations (MDO) հայեցակարգը, որը նախատեսում է միաժամանակյա գործողություններ հինգ ոլորտներում: ՆԱՏՕ հյուսիսատլանտյան դաշինքի փաստաթղթերում ավելացել է հիբրիդային սպառնալիքների գսման ռազմավարությունը: Ֆրանսիայի և Մեծ Բրիտանիայի զինված ուժերի համակարգում իրականացվել են կիբեռուժերի ուժեղացում և ապատեղեկատվության դեմ պայքարի կենտրոնների ստեղծում:

Եզրակացություն

Տարբեր մոտեցումների վերլուծությունը ցույց է տալիս, որ հիբրիդային պատերազմը չի բացառում դասական պատերազմի գոյությունը, այլ դրա վերափոխում է ժամանակակից ռազմաքաղաքական պայմաններում: Կլաուզևիցի, Հոֆֆմանի, վան Կրևելդի, Մոլտկեյի, Շարնհորսթի, Գերասիմովի մոտեցումները վերլուծելով, գալիս ենք եզրակացության, որ նշված ռազմական տեսաբանները միակարծիք չեն հիբրիդային գործողությունների և պատերազմ եզրույթի միջև զուգահեռներ անցկացնելու հարցում: Թեև նրանք տարբեր ժամանակաշրջանների մտածողներ և ռազմական գործիչներ են, այնուամենայնիվ, հիբրիդային եղանակներն ու միջոցները եղել են միշտ, գրեթե բոլոր մեզ հայտնի խոշոր բախումների և պատերազմների

ընթացքում: Փոփոխվել են միայն դրանց իրականացման տեխնիկական, տեխնոլոգիական, հոգեբանական և բարոյականային ազդեցության միջոցներն ու եղանակները (Աղյուսակ 1):

Աղյուսակ 1. «Հիբրիդային պատերազմ» եզրույթի ընկալումների համեմատական վերլուծություն

Մոտեցումներ	Հիբրիդային պատերազմի ընկալումներ
Կլաուզից	Հիբրիդային զործողությունները համարում է պատերազմ, միայն մասնակի՝ եթե առկա է զինված բախում:
Հոֆֆման	Հիբրիդային զործողությունները համարում է լիարժեք՝ նոր տեսակի պատերազմ:
Վան Կրենելդ	Հիբրիդային զործողությունները համարում է պատերազմի զարգացման հաջորդ փուլ:
Գերմանական դպրոց	Համարում է, որ հիբրիդային զործողությունները չեն համապատասխանում պատերազմ եզրույթին և խախտում պատերազմի կանոնները:
Ռուսական մոտեցում, Գերասիմովի դոկտրին	Հիբրիդային զործողությունները համարում է ժամանակակից ռազմավարական հակամարտություն:

Օգտագործված գրականության ցանկ

1. **Карл фон Клаузевиц**, Принципы ведения войны. /Министерство обороны Республики Армения, Национальный исследовательский университет обороны., Ереван., 2020. - 224 с.
2. Военный энциклопедический словарь. / Под ред. А. П. Горкина, В. А. Золотарева, В. М. Карева и др. – Москва: изд. Большая Российская энциклопедия, Рипол Классик. 2002. – 1664 с.
3. Future Warfare: The Rise of Hybrid Wars., U.S.Naval Institute <https://www.usni.org/magazines.proceedings/2005/november/future-warfare-rise-hybrid-wars>
4. Defining Hybrid Warfare., PerConcordiam. Journal of European Security and Defense Issues. <https://www.percocordiam.com>
5. **Հոֆման Ֆ.** Հիբրիդային սպառնալիքներ. Ռազմավարական մարտահրավերներ և նոր պատերազմի ձև: - Մոսկվա: ОГИ, 2010: - 216 էջ:
6. **Martin van Creveld**, The Transformation of War., Free Press., 1991., 272 p.
7. Большая российская энциклопедия 2004-2017. https://old.bigenc.ru/military_science/text/2225541
8. Serg Marco. Теория хаоса в современной гибридной войне. Доктрина Герасимова. <https://petrimazepa.com/ru/chaostheory.html>
9. NATO Review. Russia`s hybrid war against the West. <https://www.nato.int/docu/review/articles/2024/04/26/russias-hybrid-war-against-the-west/index.html>
10. *The U. S. Army in Multi-Domain Operations* 2028. TRADOC Pamphlet, 525-3-1, 6 December 2018. https://www.google.com/amp/s/www.army.mil/article-amp/243754/the_u_s_army_in_multi_domain_operations_2008

Տճանա/Հանձնվել է՝ 03.07.2025
 Рецензирована/Գրախոսվել է՝ 10.07.2025
 Принята/Ընդունվել է՝ 17.07.2025